և ունի գետ գլխաւոր ՁԲԷՆԿԻԼՅՈՆ, և 'ի յայմմէ Նորա ՁԳՈՒՐՈՒԼՅ, և գետակս օժանդակս Երասխայ. և է ստորին մասն Արցախս աշխարհի, յորում Թուին լինել գաւառքն հին ՊԱՐԶԿԱՆՔ, ՊԻՍԱՔ և ՀԱՐԺԼԱՆՔ, և ՄՈՒԽԱՆՔ 'ի հարաւոյ, յորմէ Թերևս ծագեալ Մուղանն անուան, որով կոչի դաշտն մեծ կամ անապատն 'ի հարաւոյ և յելից Երասխայ: Ի միջին դարս կոչէր երկիրս ԴԻԶԱՆ կամ ԴԻԶԱԿԱՑՏ որ և ԴԻԶԱՂ և ՎԱՌԱՆԴԱ. յորս էին և 'ի յետին դարս մեկնիչք հայկազունք, և են իսկ ցարդ: Բայց ոչ են մեղ քաջածանօթք այժմեան հանգամանք դաւառիս, յորում 'ի հնումն նշանաւոր էր Դիզափայտ լեառն, Թերևս Զիւրէին կոչեցեալ այժմ, յոր փախստեայ անկեալ որդւոց Սանեսանայ Մասքթաց արքայի հաւատացելոց 'ի Քրիստոս քարոզութեամբ Սրբոյն Գրիգորիսի, հանդերձ 3870 արամբք, պաշարեալք 'ի բռնաւոր հօրէն՝ որ խարոյկ մեծ արկ զնոքօք և բազակիզեաց, կատարեցան նահատակութեամբ, և յայսմանէ անուն լերանցն. և կամ վասն կոյտակոյտ անկելոց սրբոց դիականցն որպէս զվայտս գիզացելոց 'ի վերայ լերանցն. ուրանօր կատարեցան յետ դարու միոյ և որդիք Թէոփիլոսի զօրավարին Հունաց նահատակեալքն յԱստեղաբլուրն (176). յետ միոյ ևս դարու յայտնեցան նշխարք նոցա յամին 553, և յիշատակ նոցա կարգեցաւ 'ի ութն սրբոց: — Գլխաւոր տեղն գաւառիս յելից Զիարէթ լերին և 'ի հարաւոյ Գուրուչայի նշանակի Թոռ. և 'ի վերայ Ճանապարհին որ 'ի Ղուշոյ տանի 'ի Պարսս ընդ հարաւ, Գարապոնաւ, Աւոարի, Աւ-օղլան բերդ, Գարախանլը, Գարապաղար, Դաշքէսէն, ՃԻԿԻՐՅԻԼ՝ յորում մնաքարան, և յեղքն Երասխայ ԽիրապՔԷՐԷՆ, յանուն մեծի և հռչակաւոր կամրջոյն՝ որ նշանակէ Աստուածաշէն 'ի պարսիկ լեզու, զի հաստատուոյց է և մեծ 12 կամարօք, և ընդ այս է երթևեկ կարաւանաց յԱրարատեան. հուպ 'ի կամուրջն կայ Առաքելոց դիւղ Հայոց, և մնքարան եկացն 'ի Պարսից. և առ կրկին գետեզերքք Երասխայ մարտկոցք և ամրոցք յոլով:

179. Ե. Զ. ՃԻԻԱՆՇԻՐ և ՔԷՊԻԷՐԼԻՆ գաւառք յելից կան Գարասպաղու, ընդ մէջ Գանձակայ, Կուրայ և Երասխայ, և դաշտագետին վայրք են ընդարձակք, որ 'ի հնումն կոչէին Դաշտ Աղուանից կամ Կուրայ, զի և այն կոչին գետոյս նման սմին հարթածաւալ երկիր է ցոտս Կովկաս լերանց. և է սա ստորին կողմն Ուտի աշխարհի, յորում և բուն գաւառն ՈՒՏԻ ԱՌԱՆՁՆԱԿ և ԵՐԿԻՐՆ ԳԱՐԳԱՐԱՑԻՈՑ, յանուն գետոյն Գարգարայ, որոց սեփական ժողովուրդն սերեցաւ յորդւոց Առանայ (168) ըստ Մովսիսի Խորենեցւոյ. այլ Թուի յառաջնոց քան զնա եղելոց Սիսակեան զարմից, որ Աղուանքն կոչէին, և անդր քան զԿուր սիռեալ կային. այլ նեղեալք ապա 'ի Կովկասայնոց աղանց՝ վտարեցան յայսկոյս և կալան առ փոքր փոքր զերկոսին նահանգն զՈւտի և զԱրցախս, մասամբ փայտակարանի, և կոչեցին Աղուանից աշխարհ, որ յետոյ և Առան: Այժմու հանգամանք գաւառացս և տրոհմունք վիճակաց և գիւղերայից Թիւք և անուանք՝ սակաւածանօթք են մեզ, և ոչ նշանակին շէնք անուանիք յերկրի ասա. բայց Մանասէի 'ի հիւսիսակողմն առ Կուրան գետով, և Թէրթէր առ Թարթառաւ:

180. Յեղը գետոյս յահեկէ կողմանէ կայ Պէրդ գեօղ առ աւերակք հնոյ մայրաքաղաքին Աղուանից, այն է ՊԱՐՏԱՒ, զորոյ շինուածեանք պէսպէս աւանդեն արևելեայք, և վրացն պատմիչ ընծայէ Բարտոսի եղբօր Հայկայ. իսկ Աղուանից պատմիչ ասէ 'ի կէս Ե դարու հրամանաւ Պերոզի արքայի շինեալ, վասն որոյ և ՊԵՐՈՒԱՇԱՏ կամ ՊԵՐՈԶԱՇԱՏ կոչի 'ի նմանէ և յայլոց. արդ թէ յայսմ ժամանակի և թէ վաղագոյն շինեալ՝ սակայն չէ սա Պարտաւն Պահլաւայ՝ զոր Արտաշիրն Սասանեան խոստանայր Անակայ, այլ նա 'ի բուն Պայթեւաց աշխարհին էր. իսկ սա մայրաքաղաք եղև Աղուանից յԸ դար և աթոռ կաթողիկոսի, և բարգաւաճ վիճակաւորութեամբ, վասն որոյ և Շահապան կոչեցաւ. յամին 768 ժողով գումարեաց 'ի սմա Սիոն կաթուղիկոս Հայոց: Ի կիսոյ Ը դարու և անդր Հագարացիք և Պարսք տիրացան նմին, և բազում բռնաւորք յիրերաց իշխէին, ընդորս և Վիրք 'ի սկիզբն ԺԳ դարու, Օսմանեանք 'ի ԺԶ դարու, և այլն: Ի բարգաւաճմանս քաղաքին բազում իմաստունք Պարսիկք երևեցան 'ի քաղաքիս: ՈՉ գիտեմ երբ իսպառ յաւեր յամայի դարձաւ Պարտաւ, և մնան աւերակքն 'ի պղաւէտ սահմանս, ուր լինի և ընտիր շերամ մեռաքսի: Մերձ 'ի Պարտաւ էին Հոլոյ տեղիք Թագաւորին Աղուանից Աւոնն կոչեցեալ, և կաթուղիկոսին՝ Բնէրդաիոր: Յիշատակին զվայրօքն և Դարպան գիւղ արքունի, և Դարահոճ՝ ուր Մաթէ աշակերտ Յովհաննու Մանդակունեայ եդեալ էր մասն 'ի նշխարաց սրբոյ Լուսաւորչին և Հռիփսիմեայ:

181. Յարևմտեան կողմն գաւառիս առ խաղիւք Թարթառայ կան անուանի մենաստանքն Խոնբայ կամ Խնբայ-Վանք՝ պայծառացեալ 'ի ԺԲ-ԺԴ դարս. և Խոնբայ Վանք կամ Դաւթի Վանք յանուն աշակերտի միոյ առաքելոյն Թադէոսի, որոյ կանգուն կայ եկեղեցին մեծ շինեալ յԱրզուխաթունէ խաչենոյ տիկնոջէ յամին 1214. և արձանագիր նորա և այլոց, և գերեզմանք պայազատաց. մերձ սոցին և միւս վանք Գէղամէջ կոչեցեալ: — Յերի վայրացս առ Դուստականաւ մերձ 'ի ստորոտս լերանց Արցախու էր Կաղանխաղաւայ աւանն, յորմէ էր Մովսէս պատմիչ տանն Աղուանից յԷ դարու. և նեղքսագոյն 'ի լեռնակողմանն Պարտաւայ՝ ԳՈՐՈԶՈՒ ԵՐԿԻՐՆ և լեառն ՔՌԻՒ, ուր 'ի կէս Թ դարու Ապու-Մուսէ Աղուանից իշխան զամ մի ողջոյն դիմամարտեցաւ ընդ Բուղայի բռնաւորի, աւելի քան զքսան և հինգ անգամ հարեալ ընդ նմա և ոչ պարտեալ, մինչև եկին 'ի պայման հաշտութեան. անդ է Քռիքայ վանքն շինեալ կամ նորոգեալ 'ի կէս ԺԳ դարու. 'ի նմին լերին նահատակեցաւ 'ի Բուղայէ՝ Մուկաթէլ Վանանդացի: — Յերկրիս Գորոզու որ և ԳՈՐՈԶ, Թուի Թէ և մերձ 'ի լեառնն ՔԹԻՒ, որ և ՔԻՒ գրի, էր ԳԻՍ աւան, ուր Ս. Եղիշէ առաքեալ կանգնեաց զմայր եկեղեցեաց Աղուանից, և անդ կատարեցաւ մի յաշակերտաց իւրոց, իսկ ինքն 'ի Դաշքանն Զարգուանի 'ի տեղիս զոհարանաց դիցն: Անդ զկայ Էառ և Սուրբն Մես-